# ՎԱՉԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

*Հայաստանի գիտությունը և բարձրագույն կրթության համակարգը ծանր կորուստ կրեցին։ Հանկարծահաս մահը մեր շարքերից խլեց ականավոր գրականագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՎԱՉԵ ՍՄԲԱՏԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ։ Նրա ամբողջ գիտակից կյանքը կապված է եղել հայ բազմադարյան գրականության ուսումնասիրության և դասավանդման շնորհակալ գործի հետ։*



*Վ. Ս. Նալբանդյանը ծնվել է 1919 թ. փետրվարի 25-ին Նոր Բայազետ քաղաքում։ Ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ սովորել է Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում և ավարտել այն գերազանցության դիպլոմով։*

*Հայրենական պատերազմը փոխեց երիտասարդ բանասերի կյանքի ընթացքը, և նա հինգ տարի ծառայեց խորհրդային բանակի շարքերում՝ մասնակցելով Հյուսիսային Կովկասում մղված մարտերին և արժանանալով մի շարք շքանշանների ու մեդալների։*

*1946 թ. Նալբանդյանը սովորել է Համալսարանի ասպիրանտուրայում ու մասնագիտացել հայ հին և միջնադարյան գրականության հարցերի մեջ։ 1948 թ. սկսել է դասավանդել համալսարանում՝ կես դար շարունակ գիտելիքներ ու սեր պատվաստելով հայ բազմադարյան մշակույթի արժեքների նկատմամբ։*

*Վաչե Նալբանդյանի գիտական հետաքրքրությունները ընդգրկում են հայ հին գրականության և պատմագրության բազմազան հարցեր։ Պատմության և գեղարվեստական գրականության փոխհարաբերության տեսանկյունից նա մանրամասնորեն վերլուծել է Դ. Դեմիրճյանի և Ստ. Զորյանի պատմավեպերը, հայ պատմագեղարվեստական գրականության բազմաթիվ այլ երկեր։ Այդ աշխատանքները դրված են եղել նրա թեկնածուական (1953 թ.) և դոկտորական (1968 թ.) ատենախոսությունների հիմքում։ Հայերեն, ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներով հրատարակվել են նրա բազմաթիվ աշխատություններ, որոնց թվում՝ «Վարդանանց պատերազմը» և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», «Դրոշը և պատմությունը», «Թբիլիսին հայ մատենագրության մեջ», մենագրություններ Եղիշեի, Գրիգոր Նարեկացու և Սայաթ-Նովայի մասին։ «Համաշխարհային գրականության պատմության» ռուսերեն բազմահատորյակում նա գրել է հայ հին և միջնադարյան գրականությանը վերաբերող գլուխները։ Զեկուցումներով և դասախոսություններով հանդես է եկել Լեհաստանում և Հարավսլավիայում, Գերմանիայում և Հունգարիայում գումարված գիտաժողովներում։*

*1971 թ. Վ. Նալբանդյանն ընտրվել է Ակադեմիայի թղթակից անդամ, իսկ հետագայում՝ ակադեմիկոս։*

*Վաչե Նալբանդյանը եղել է ակտիվ հասարակական գործիչ, վարել է մի շարք կուսակցական և վարչական պաշտոններ։ Նա եղել է Հայկական ԽՍՀ 4—7-րդ գումարումների Գերա-*

դույն խորհրդի պատգամավոր, իսկ 1959—1967 թթ.՝ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահի տեղակալ:

Նա գիտության կազմակերպիչ էր, մի հատկանիշ, որ լիովին դրսևորվեց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի, Երևանի Պետական համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրենի բազմամյա գործունեության մեջ: 1968 թ. ի վեր նա մեծ բանիմացությամբ ու նվիրումով վարում էր ՀՀ ԳԱԱ Նախագահության առընթեր գրադարանային խորհրդի նախագահի և Ֆունդամենտալ գիտական գրադարանի տնօրենի պաշտոնները:

Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ Վաչե Նալբանդյանն այլևս ֆիզիկապես մեզ հետ չէ: Բայց նա միշտ մեզ հետ կլինի իր բարի հիշատակով և այն բոլոր գործերով, որ նա արել է ի նպաստ հայ գրականության ու գիտության զարգացման:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական խորհուրդը և խմբագրության աշխատակիցները խոր վիշտ են հայտնում «Հանդեսի» խմբագրական խորհրդի երկարամյա անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վաչե Նալբանդյանի մահվան կապակցությամբ և ցավակցում են նրա ընտանիքին և հարազատներին: